

ովուեալս ընդ ամենայն կողմանս աշխարհիս։ Եւ տես Դու, զի ցանկամք ամենեքեան ամենայն հոգւով ընդ բարեբաղդ աւուրս մուտ Քո ի մերձաւոր քաղաքս մեր տու Առաքելական Աթոռուկ՝ Կաթուղիկէ լուսածաւալ Սուրբ Էջմիածնի, որ մնայ անհամբեր հոգւոյն հրճուտնօք արժանաժառանգ Փոխանորդիդ տիեզերալոյս երանութեան՝ սիրալիր իւրում Փեսայիդ, աներկբայ յուսով ընդ Սրբազն արի և արդար Տեսչութեան Նորին, Սրբոյ Հօրն մերոյ ասեմ՝ Գրիգորի Խուաւորչին՝ ունելով ունիլ և զընթացու զգործառնութիւնս յամենայնի յօգուտ և ի լուսաւորութիւն իմա՝ և մանաւանդ՝ առաւել ևս ի բարեկարգութիւն հոգեւորական դասաւն Հայաստանեաց Սուրբ Եկեղեցւոյ մերոյ, որով և ի բարօրական պարծանս ընդհանուր Ազգիդ Հայոց։

«Ահա, Վեհափառ Տէր, այսպիսի լիակատար յուսով ի վերայ բարեխնամ Հովուապետիդ մերոյ և ամենայն հոգւով մեծափառ փագ բաղձանաց՝ Հայցեմք և մեք ի վերնխնամ Տեսչութենէ Հոգի զօրաւթեան և իմաստութեան հանդերձ լի ու լի առողջութեամբ ընդ բազմատեւ ամս պարգևել Քեզ ընտրելոյդ իւրում ի լրումն ցանկաւթեան Ազգիդ, ընդ որ ի միասին շնորհ կալնում և ես որպէս ներկայացուցիչ բոլոր հասարակութեան քաղաքիս շնորհաւորել զշնորհաբաշի մուտ Քո ի Քաղաքս մեր. և համբուրել ըզ-Սրբազնասուրբ Ա.ջ Օձելոյդ Աստուծոյ»։

Այս գանձ.

28 և 29 Հոկտ. 1885 ամ Երևան։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ԳԱԼՈՏԱՆ ՀԱՆԴԻՍԻ ՀԱՄԱՌՈՑ
ՆԿԱՐԱԳԻՐԸ.

Երբ Հեռագիրն աւետեց Նորին Վեհափառութեան մուտն ի Տփիսիս, Երեանայ պաշտօնական տեղիքն ևս սկսեցին պատրաստուիլ Նորին Վեհափառութեան վայելուչ ընդունելութեան համար և ճաշ տալ, որ Նորին Վեհափառութիւնը միջոց չունեցաւ ընդունելու վճռած լինելով շուտ մեկնիլ ի Մայր Աթոռն։ Պարսն Նահանգապետը, Պարսն Քաղաքագլուխը, Գերապատիւ Առաջնորդը թեմիս, Թեմական Դպրանոցի Վարչութիւնը՝ իւրաքանչյուրն իրանց վերաբերեալ պատրաստութիւնները տեսան։ Ծաղկաձորի,

Քայտղէտիւ, Երեւանայ և Եթմիածնայ գաւառաց գուառապետներին ընդունելութեան հրահանգներ գնացին Պ. Նահանգապետից. կարգադրութիւն եղաւ թէ Պ. Փոխ-Նահանգապետն և քաղաքիս Աստիկանապետն որաեզ պիտի գիմաւորեն Նորին Սրբութեան։ Ոյն օրինակ կարգադրութիւններ որաւ Թեմիս Գերապետիւ Առաջնորդը՝ վերաբերմամբ գործակալաց։

26 ին Թեմիս Գերապետիւ Փոխանորդը ճանապարհ ընկաւ սահմանագլխումն ընդունելու Նորին Սրբութեան։ 28 ին Պ. Փոխ-Նահանգապետաք գնաց Ելլիոր կոչուած՝ քաղաքից գէպի հիւսիս, առաջին կայարանը, իսկ առաւօանեան 8 ժամից արգէն Պ. Պ. Քաղաքագլուխը՝ իրաւասուների հետ, և Աստիկանապետը՝ իւրայնոց հետ գիմաւորելով, սպասումէին քաղաքիս սահմանի վերայ։ 8 ½ ժամին՝ հասաւ Նորին Սրբութիւնը, օրհնելով դիմաւորդներին, ընդունեց աղ և հաց, ուր Պ. Քաղաքագլուխը կարգաց քաղաքի կողմից ճառ, որն արգէն տպուած է «Երեւանեան Յայտարարութեան» մէջ։ Քաղաքիս եկեղեցեաց զանգերն աւետելով Նորին Վեհափառութեան մուտն ի քաղաքս, ժողովրդին գուրս հրաւիրեցին։ Ճանապարհի վերայ գտանուող բոլոր խանութները գոյ ու զարգարուած էին գրոշակներով. այսպէս զարգարուած էին և տներն ու հիմնարկութիւնները՝ քաղաքիս հիւսիս – արեւելեան ծայրից մինչ հարաւ – տրեմանեան ծայրը՝ ուր գտանվումէ Առաջնորդարանը։ Առաջնորդարանից դէպի Արեւելք, բաւական հեւաւորութեան վերայ, հրապարակում, ողատուոյ կամարի մօտ, սպասումէին հոգեսորական գասն՝ զգեստաւորուած, Պրօդիմնապիօնի հայ օրիորդներն՝ իրանց վարժուհիներով, ծաղկափունջները ձեռքերնում։ Թեմանիան Դպրանոցի Հոգաբարձուուք, Տեսուզը, ուսուցիչները և աշակերտները՝ երկար զուգահեռագիծ կազմելով. քաղաքիս արհեստաւորաց գասերն իրանց գրոշակներով, թուով 14, և մանիշակագոյն ամպհովանին, որ բանած ունէին քաղաքիս նախկին և այժմու քաղաքագլուխները մի կողմից, նգդիրու Պ. Գտաւուապետ Գեօգչայեանը և երգուեալ հաւատարմատար Պ. Վարդան Եղիազարեանը միւս կողմից։ Թեմիս գերապետիւ Փոխանորդը հանգիսագլուխ կանգնած՝ հսկում էր հանդիսի կարգադրութեան։ Ահագին հրապարակը և հրապարակի վերայ գտանուող տների ու խանութների տանէքը մարդկային քաղմութեան ծովի էր գարձած, բալոր սոտիւնութիւնը զբարար գործակած էր կարգադրա-

հութեամբ։ Եռսանկոր Բարկանովիլ յաջողակ կէտ էր որսնում՝ հանդէսը լուսանկարելու։ Բնութիւնը ևս խաղաղ էր և պայծառ։ Ժամի 9-ը լրացաւ, ահա և նորին Վեհափառութեան քառաձի կառքը սրարշաւ, շրջապատուած մի վաշտ կօզակներով և բազմաթիւ այլ հեծեալներով, որին հետեւում էին 50 ից աւելի գայետօններ։ Կառքը կանգ առաւ, հանդիսականները պատկառելի դիրք բռնած՝ գլխարկնին վեր առան, որոշուեցան մահմետականները քրիստոնեաններից. իջաւ Հայրապետը կառքից, իջան և բոլոր բարձրաստիճան ուղեկցողներն իրանց կառքերից, ծաղկեայ շուրջառը ծածկեցին նորին Սրբութեան, խոչն ու գտւազանը մատուցին, ուղեկցող հոգեւորականները ևս շուրջառը ծածկելով, Վեհափառ Տէրը մտաւ ամպհովանու տակը՝ ժողովրդին խոչակընքելով։

Հանդէսն ընթացաւ գէպի տռաջնորդական եկեղեցին, «Հրաշափառն» ասելով։ Կօզակների վաշտն ընկաւ հանդիսի առաջը՝ ճանապարհ բանալու, որին հետեւցին՝ Դպրանոցի 270 աշակերտաց երկգիծ շարքը՝ ուսուցչական խումբը, հոգաբարձուք, երգեցիկ խումբը, հոգեւորական գասը, նորին Վեհափառութիւնը՝ որոյ աջ թեւը թեմիս գերապատիւ Փոխանորդը, իսկ ձախը՝ Հաշտարիանի գերապատիւ Առաջնորդ Սուքիաս եպիսկոպոսը բռնած, հուսկ յետոյ ժողովրդեան ահագին բազմութիւնը յամրոքայլ և հանդիսաւոր։ Այսպիսով հանդէսը հասաւ առաջնորդական եկեղեցուն։ Եկեղեցին զարդարուած էր պատշաճապէս։ Վեհափառ Հայրապետը մաղթանքից զկնի բազմեց սեղանի առաջ դրած բազկաթուի վերոյ՝ երեսը գէպի ժողովուրդը. եկեղեցին ըստ ամենայնի լցուեցաւ, և բազմութեան մեծագոյն մասը մնաց գուրսը։ Թեմիս Գերապատիւ Փոխանորդը յուղուած սրտով մի ճառ կարգաց, որոյ մասին ոչինչ չենք ասում, ըստ որում արդէն տպուած է «Երեանեան Յայտարարութեան» մէջ։ Նորին Վեհափառութիւնը մի համառօտ ատենաբանութիւն արաւ, որոյ բավանդակութիւնը գրեթէ այս էր, — Սիրոյ և խաղաղութեան ողջոյն տալով, եպիսկոպոսութիւնը մարտիրոսութիւն, իսկ կաթողիկոսութիւնը՝ բարոյական կատարեալ նահատակութիւն, Ես, ասաց Վեհափառը, եկայ նահատակութիւն իմ ազգի և եկեղեցւոյ համար, կաթուզիկոսական առպարիզում ոչ մի մսիթարութիւն չեմ աեսնաւմ, միակ միսիթարութիւնս ովհոտի լինի մեր փակեալ Դպրոցների դրանց

բայցուիլը, (ժողովուրդը միաձայն՝ « Տա՛ Աստուած ») և կրացուին նոքար, եթէ ուզիղ սրտով խնդրենք Սատծուց և մեր ամենողորմած Կոյսրից։ Սպա քարեմաղթութիւններ անելով ամենողորմած Կոյսրից։ Սպա քարեմաղթութիւններ անելով ամենողորմած Կոյսրից։ Կովկասեան Կառավարչապետն իւր Նահանգապետներով և գաւառապետներով, ժողովրդի հոգեորական և աշխարհական դատերին, մեր դպրոցաց հոգաբարձուներին, տեսուններին, ուսուցիչներին և ուսանողներին ու «Պահպանից» ասելով, ելաւ եկեղեցուց և կրկին նոյն հանդիսաւոր ընթացքով, գիմեց Առաջնորդարան, որոյ դրան առջեւ Պ. Նահանգապետն ընդառաջ գնալով, համբուրեց Նորին Արբութեան աջն ու խայը և Ճնորհաւորեց գալուստը։ Վեհափառ Հայրապետն ևս Նորին Գերազանցութեան երիցս համբուրելով և մօտի նշանաւոր անձանց Աջը տալով, մտաւ դահլիճ, ուր առկաւին չնստած ընդունեց քաղաքիս Թիւրք հասարակութեան ներկայացուցիչներին և Պարսից Հիւպատուին՝ հետեւեալ խօսքերով. « Նորհակալ եմ Զեր մեծարանքից, մենք մի երկրի եղբայր ազգեր ենք, տարբեր կրօններով. կբարեմաղթեմ Սատծուց որ մեզ սիրով պահէ » :

— « Մենք, պատասխանեց Հաջի Աէյիդ-Հասան աղան, որ մի պատկառելի ծերունի է, եղելենք ի բնէ միմեանց ուրախակից և տրտմակից զրայիներ. Զեր օրհնութեամբ, այսուհետեւ ևս նոյնը պիտի մնանք » : Այնուհետեւ Վեհափառը մտաւ իւր համար պատրաստած սենեակը. ժողովաւրդը քաշուեցաւ. 10 բոպէից յետոյ ընդունեց Սինօդի անդամներին, որք եկած էին ընդառաջ և սպասում էին Առաջնորդարանում։ Արբազան Մկրտիչ Արքեպիսկոպոսը մի ուզերձով շնորհաւորեց Հայրապետի գալուստը և համբուրեց Աջը. Նորին Վեհափառութիւնը երիցս համբուրելով Արբազանի գլուխը՝ նոտեցոյց իւր ձախակողմեան թիկնաթուի վերայ և միւսները համբուրելով Վեհափառի Աջը՝ մնացին կանգնած։ Սենեկի դրները ծածկուեցան, այլ ևս չիմացուեց թէ ինչ խօսեց նոցա հետ։ 15 բոպէից յետոյ բարեհաճեցաւ ընդունել թեմական Դպրանոցի Հոգաբարձութեան, Տեսչին և ուսուցչական խմբին. այսաեղ Տեսուչը ներկայացրուց Դպրանոցի պատուաւոր տեղեկագիրը որ, արդէն տողւած է, բայց ճառը մնաց, ըստ որում Դպրանոցում կարգալու համար էր պատրաստած։ Նորին Վեհափառութիւնը ամենքին Աջ տալով, օրհնեց և յոյս յայտնեց,

որ իւրաքանչիւր ոք իւր պաշտօնում յառաջադէմ կլինի և թէ ինքը միջաց կգանէ աւելի մօտ ծանօթանալու Դպրանոցի ներքին և արտաքին կառավարութեան, ապա արձակեց:

Երեկոյեան ժամը 6—10—ը ճրագալոյց էր քաղաքում և Առաջնորդարանի գալթում ու դէմ յանդէպ՝ Հրազդանի ոջ կողմում։ Ժամի 5—9—ը քաղաքիս իշխաններին ընդունեց հետ զհեաէ և ամենքն ես լաւ տպաւորութեան տակ մնացին։ Հետեւեալ օրը ժամը 9—ին ընդունեց նախ թիւրք իրաւասուներին և մեծամեծներին, սիրոյ և խաղաղութեան խրաններ տալով արձակեց։ յետոյ գարձեալ հանդիսաւոր կերպիւ այցելութեան գնաց Պ. Նահանգապետին և ընդունեց նորա մօտ ժողավուած քաղաքական և զինուորական հիմնարկութեանց ներկայացուցիչներին, քաղաքիս Հայ և Թիւրք իրաւասուներին. խնդրեց Պ. Նահանգապետին, որ քաղցր աչք ունենայ դէպի Մայր Աթոռը և հոյրաբար կառավարէ իւր թեմի Հոյ և Թուրք ազգաբնակութեանը։ Այնուհետեւ առաձին սենեակ հրաւիրուելով, մի քանի քարձր աստիճան հոգեւորականների և աշխահականների հետ սուրճ վայելեց և ապա դուրս գալով, օրհնեց գոհիմինում սպասող բոլոր ներկայացուցիչներին, որոնք անխափիր, քրիստոնեայ և մահմետական, համբուրեցին Աջը, ապա արձակեց ամենքին և ելաւ երեկոյեան կարգով և շքեղութեամբ ընթացաւ դէպի Մայր Աթոռը։

Ս. Բէժ - նազարէան.

Երեխանի ՓՈԽ-ԹԵՄԱԿԱԼ ԳԵՐ. ԳԷՈՐԳ ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ՃԱՌԸ:

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՌ

ՍՐԲԱԶԱԳՈՑՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Հայագարեանն Առաքելական անտիւեղծ եկեղեցին Հայաստանիայց զԱստո ածպետականին զեղգեղէ յարդ զփառս և զանուն, է որ անմիջիթար և է որ անփունեալ անհամբոյր ժամանակի ի շնորհաւ Սարսուռ զամենայն մարմին ունի, որ զնորին պատկառելի մեծու-